# ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ա. Մ.

*VII դ. առաջին կեսին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան այնպիսի իրադարձություններ, որոնք եկան փոխելու Արևելքի երկրների քաղաքական դիմագիծը: Տարածաշրջանում հարուրամյակներ իշխող Պարսկաստանը և Բյուզանդիան այնքան էին թուլացել երկարատև պատերազմներից, որ ի վիճակի չեղան դիմագրավելու արաբական սպառնալիքին: 636 թ. օգոստոսի 20-ին Յարմուկ գետի մոտ արաբները հաղթանակ տարան բյուզանդացիների նկատմամբ[1], իսկ 637 թ. ամռանը, Եփրատից արևմուտք, Քադեսիայի նշանավոր ճակատամարտում[2] սոսկալի պարտության մատնեցին պարսկական բանակին:*

*Ինչպես Հայաստանի համար բախտորոշ որևէ ժամանակահատվածում, այնպես էլ արաբական արշավանքների ժամանակ հայ քաղաքական իշխող վերնախավում չկար միօրինակ դիրքորոշում: Հայոց իշխան Դավիթ Սահառունուն (635-639 թթ.) հաջորդած Թո-դորոս Ռշտունին[3], օգտվելով այն հանգամանքից, որ Պարսկաստանը և Բյուզանդիան օրհասական պայքար էին մղում արաբների դեմ, միավորեց Հայաստանի պարսկական ու բյուզանդական մասերը: Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, վերջինս չկարողացավ դառնալ միավորված Հայաստանի լիարժեք ղեկավարը, քանի որ նախարարների մեծ մասն ընդհանրապես չընդունեց նրա վարած արտաքին քաղաքականությունը:*

*Կործանման եզրին հասցնելով պարսկական տերությունը՝ արաբները 640 թ.[4] Բաղեշի լեռնանցքով[5] ներխուժեցին Հայաստանի սահմանները:*

---

[1] *Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13, Բյուզանդական աղբյուրներ, Դ,* **Թեոփանես Խոստովանող** *(այսուհետև՝ Թեոփանես Խոստովանող), թագմանություն բնագրից. առաջաբան և ծանոթություններ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1983, էջ 47, ծան. 264:*

[2] *Տե՛ս* **Muir W.** *The Caliphate, its Rist, Decline and Fall, Edinburgh, 1924, p. 104-111.*

[3] *Պատմութիւն* **Սեբէոսի** *(այսուհետև՝ Սեբեոս) աշխատասիրությամբ՝ Գ. Աբգարյանի, Ե., 1979, էջ 133: «Հայոց իշխան» տիտղոսի մասին տե՛ս* **Տեր-Ղևոնդյան Ա.,** *Հայոց իշխան. տիտղոսի ծագումը և հայոց տերությունը VII դարում (Հոդվածների ժողովածու, Ե., 2003, էջ 190-196):*

[4] *Հայաստան արաբների արշավանքի թվականի մասին մանրամասն տե՛ս* **Մանանդյան Հ.,** *Երկեր, հ. Բ, Ե., 1977, էջ 508-519:* **Տեր-Ղևոնդյան Ա.,** *Հայաստանը VI-VIII դարերում (արաբական տիրպետության հաստատման առաջին շրջանում), Ե., 1996, էջ 43-54:*

*Չորրորդ Հայքը նվաճելուց հետո արաբական 18 հազարանոց զորամիավորումը շարժվում է դեպի Տարոն: Այստեղ արաբներին դիմադրում է Տիրան Մամիկոնյանը՝ իր 8 հազարանոց զորամասով, սակայն նվաճողները օգտագործելով իրենց թվական գերակշռությունը՝ Գրգուռ լեռան մոտ հաղթանակ են տանում[6]: Ասպատակելով Հայաստանի մի շարք գավառներ և գերեվարելով բնակչությանը՝ արաբական զորագնդերը մտնում են Արարատյան դաշտ: Դեպքերի ժամանակակից Սեբեոսը նշում է. «Եւ ել զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս Զորոյ յաշխարհն Տարաւնոյ. առին զնա և Բգնունիս և զԱղիովիտ: Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն... և ընդ Գոգովիտ՝ թափանցեան յԱյրարատ»[7]: Մոտենալով Դվինին՝ արաբները բանակ դրեցին Խոսրովակերտ անտառի եզրին: Մայրաքաղաքը մնացել էր անպաշպան: Այս պատասխանատու և դժվարին պահին, երբ Դվինին սպառնում էր ավերման ու սրածության վտանգը, հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին գտնվում էր Նախճավանում[8]: Մինչդեռ, երբ արաբները Տարոնից շարժվում էին դեպի Դվին, նա հնարավորություն ուներ ավելի շուտ հասնել մայրաքաղաք, քան արաբները և ձեռնարկել քաղաքի պաշտպանությանը: Սկզբնաղբյուրների բացակայության պատճառով, այսօր մենք հնարավորություն չունենք ճշտելու, թե սպարապետին ինչը ստիպեց լինել մարաքաղաքի ավերման կողմնակի դիտորդ:*

*Պաշարելով Դվինը՝ արաբներն օգտվեցին քաղաքի անպատրաստ վիճակից, և սանդուղքներով բարձրանալով պարիսպների վրա՝ 640 թ. հոկտեմբերի 6-ին[9] գրավեցին քաղաքը, սրի քաշեցին 12 հազար և գերեվարեցին 35 հազար խաղաղ բնակչի[10]:*

---

[5] *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ, Բ,* **Իբն ալ-Ասիր,** *թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981, էջ 46:*

[6] *Տե՛ս* **Յովհան Մամիկոնեան,** *Պատմութիւն Տարօնոյ (այսուհետև՝ Հովհան Մամիկոնյան), աշխատությամբ և առաջաբանով Աշ. Աբրահամյանի, Ե., 1941, էջ 285-286:*

[7] **Սեբեոս,** *էջ 138:*

[8] *Նույն տեղում:*

[9] *Տե՛ս* **Ղ. Ալիշան,** *Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 407, 495:* **Մանանդյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 521,* **Առաքելյան Բ.,** *Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարը անկախության համար (Արմֆան գիտական ժողովածու, Ե., 1941, էջ 66),* **Հարությունյան Հ.,** *Հայաստանն արաբական խալիֆաթի տիրապետության ժամանակ (640-856), Ե., 1946, էջ 14,* **Մելիք-Բախշյան Ս.,** *Հայաստանը VII-IX դարերում, Ե., 1968, էջ 44,* **Тер-Гевондян А.** *Армения и арабский халифат, Е., 1977, с. 25,* **Նույնի՝** *Հայաստանը VI-VIII դարերում, էջ 47: Դվինի գրավման թվականի վերաբերյալ մյուս տեսակետները տե՛ս* **Դանիելյան Է. Լ.,** *Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին VI-VII դարեր, Ե., 2000, էջ 157-162,* **Վարդանյան Վ.,** *Հայ նախարարների դիրքորոշումը արաբական*

*Մի քանի օր մնալով Դվինում, ապա իր հետ տանելով թալանը և գերիներին՝ արաբական բանակը բռնեց վերադարձի ճանապարհը: Սպարապետ Թեոդորոս Ռշտունին Կոգովիտ գավառում փորձեց կանգնեցնել արաբներին՝ գերիներին ազատելու համար, սակայն պարտություն կրեց, իսկ արաբները վերադարձան Վերին Միջագետք*[11]*:*

*Տեսնելով երկրի առջև ծառացած խնդիրները, ինչպես նաև համոզված լինելով, որ 640 թ. արաբական ասպատակություններն ու գերեվարությունները վերջինը չեն լինելու՝ նորընտիր կաթողիկոս Ներսես Գ Տայեցին (641-661 թթ.) դիմեց բյուզանդական արքունիքին, որպեսզի Թեոդորոս Ռշտունին պաշտոնապես ճանաչվի Հայոց իշխան: Կայսրը բավարարեց կաթողիկոսի խնդրանքը, և, Սեբեոսի վկայությամբ, «հրաման հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ հանդերձ պատրկութեան պատուով»*[12]*: Սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է Է. Դանիելյանը, «Թեո-դորոս Ռշտունին, փաստորեն, երկրում արդեն Հայոց իշխան էր հռչակվել, երբ կայսրությունը ճանաչեց նրան այդ պաշտոնում»*[13]*: Կարծում ենք, որ կաթողիկոսը ցանկանում էր այս քայլով իրավաբանորեն ամրագրել Թ. Ռշտունու իշխանությունը: Թե՛ նրա իշխանության ճանաչումը, թե՛ Պրոկոպիոսի գլխավորությամբ Հայաստան զորք ուղարկելը բխում էին ուժերի նոր փոխհարաբերությունից, որն առաջացել էր տարածաշրջանում արաբական վտանգի հանդես գալուց ի վեր: Մինչ տեղի էր ունենում հայ-բյուզանդական հարաբերությունների կարգավորումը, իր հոգեվարքն էր ապրում երբեմնի աշխարհակալ Պարսկաստանը: 642 թ. Նեհավենդի ճակատամարտում պարսից վերջին բանակը ծանր պարտություն կրեց, և խալիֆայության կողմից Հայաստանին սպառնացող վտանգը էլ ավելի մեծացավ: Դրան հաջորդեց արաբների մեկ այլ արշավանք դեպի Հայաստան՝ Պարսկաստանը վերջնականապես նվաճելուց հետո*[14]*:*

---

*արշավանքների ժամանակ [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2000, - 3, էջ 203],* **Եղիազարյան Ա.,** *Արաբների արշավանքը Ատրպատականի վրայով դեպի Հայաստան (ԵՊՀ պատմության ֆակուլտետի Տարեգիրք, Ե., 2005, էջ 97-98):*

[10] **Սեբեոս,** *138-139,* **Սամուէլի քահանայի Անեցւոյ** *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց (այսուհետև՝ Սամուէլ Անեցի), յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 80: Chrenique de Denys de tell Mahre, trad. J. Chabot, Paris, 1895, p. 6.*

[11] *Տե՛ս* **Սեբեոս,** *էջ 138-139:*

[12] *Նույն տեղում, էջ 139: Ա. Տեր-Ղևոնդյանը նշում է, որ Ներսես Գ Տայեցին կայսրին դիմել է որոշ հայ նախարարների նախաձեռնությամբ (***Тер-Гевондян А.,** *նշվ. աշխ., էջ 26):*

[13] **Դանիելյան Է. Լ.,** *նշվ. աշխ., էջ 161:*

[14] *Տե՛ս Պատմութիւն* **Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց** *(այսուհետև՝ Ղևոնդ), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 6-8: Այս արշավանքի թվականի վերաբերյալ ուսումասիրողները միակարծիք չեն. Հ. Մանանդյանը գտնում է, որ այն տեղի է ունեցել 642-644 թթ. (նշվ. աշխ., էջ 528): Ս. Մելիք-Բախշյանը նշում է 643-646 թթ. (նշվ. աշխ., էջ 47), իսկ Ա. Տեր-*

Հայաստանում գտնվող բյուզանդական բանակի հրամանատար Պրոկոպիոսի և հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու հարաբերությունները հենց սկզբից լարված էին, քանի որ կողմերը տարբեր կերպ էին պատկերացնում արաբների դեմ հետագա պայքարի ընթացքը: Հակասություններն այն աստիճան լարվեցին, որ փոխանակ նրանց դեմ միասնական ճակատով հանդես գալու, փորձեցին առանձին դիմագրավել արաբներին, ինչն էլ վճռեց հետագա պայքարի ելքը: Բյուզանդական բանակատեղիից հեռանալուց հետո Թեոդորոս Ռշտունին փոքրաթիվ ուժերով դիմեց վճռական քայլերի: Տեսնելով թշնամու մեծաթիվ լինելը՝ Հայոց իշխանը դարանամուտ եղավ Մարդուցայքից Կոգովիտ տանող ճանապարհին գտնվող Եղբարք Սարակ[15] կոչվող բլրի մոտ և հաղթանակ տարավ անակնկալի եկած արաբների նկատմամբ[16]: Փորձելով օգտվել արաբների ծանր վիճակից՝ Պրոկոպիոսը հարձակվեց նրանց վրա, սակայն պարտություն կրեց[17]: Սրանից հետո արդեն հայ-բյուզանդական դաշինքի մասին խոսելն անիմաստ էր: Երկու կողմերն էլ մեղադրում էին մեկը մյուսին: Ի վերջո, Թ. Ռշտունին ձերբակալվում և ուղարկվում է Կոստանդնապոլիս, սակայն որոշ ժամանակ անց արդարացվում է և վերստանալով Հայոց իշխանի և սպարապետության պաշտոնները՝ վերադառնում է հայրենիք: Այս անցքերին քաջատեղյակ Սեբեոսը նշում է, որ կայսրը Թեոդորոս Ռշտունուն նշանակեց ակամա. «...եթէ կամիցին իշխանքն Հայոց և եթէ ոչ կամիցին»[18]: Այստեղից պարզ երևում է, որ նախարարների մեծամասնությունը Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ չէր կամենում Թեոդորոս Ռշտունու իշխանությունը[19]: Դրա ապացույցն է նաև այն հանգամանքը, որ մինչ այդ նախարարների մեծ մասը լքել էր նրան, և Թումա անունով բյուզանդական մի պաշտոնյա կարողացավ Կոտայք գավառում ձերբակալել Հայոց իշխանին[20]:

Այդուհանդերձ, բյուզանդական կայսեր առաջարկը հայերին՝ ընդունել քաղկեդոնականություն, ինչ-որ ժամանակ միավորեց Թեոդորոս Ռշտունու և Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի, Մամիկոն-յանների քաղաքական խմբավորումները: Ն. Հովհաննիսյանը գրում է. «Կոստանդ II կայսեր որոշումը՝ ստիպել հայերին ընդունելու քաղկեդոնությունը, մեծ հարված էր լինելու հայության ինքնության պահպանման հենասյուներից մեկին՝

---

Ղևոնդյանը՝ 642-643 թթ. (**Тер-Гевондян А.**, նշվ. աշխ., էջ 27, **նույնի՝** Հայաստանը VI-VIII դարերում, էջ 51):

[15] Հ. Մանանդյանը կարծում է, որ Եղբարք Սարակ լեռը գտնվում է Մարդու-ցայք-Կոգովիտ ճանապարհի վրա տե՛ս Երկեր, հ. Ե., 1984, էջ 183-184:

[16] Տե՛ս **Ղևոնդ**, էջ 7-8:

[17] Նույն տեղում:

[18] Սեբեոս, էջ 145:

[19] **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանը VII-VIII դարերում, էջ 60-61:

[20] Տե՛ս **Սեբեոս**, էջ 143:

*հայոց եկեղեցուն»[21]: Դրա արդյունքն էր Դվինի 649 թ. եկեղեցական ժողովը, որը մերժեց կայսեր առաջարկը:*

*Մինչ Հայաստանում զբաղված էին կրոնական խնդիրներով, 650 թ. հետևեց ևս մեկ արաբական արշավանք Ատրպատականի կողմից: Արաբների հրոսակախմբերը, բաժանվելով մի քանի մասերի, ասպատակեցին Հայաստանի մի շարք շրջաններ[22]: Այս արշավանքին բազմիցս և մանրամասն անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ: Նշենք միայն, որ արաբները բազմահազար գերյալների հավաքել էին Արծափ բերդի դիմաց՝ նրանց կոտորելու, սակայն Թեոդորոս Ռշտունին ժամանակին հասավ իր զորաջոկատով և հենց բերդի պարսպների տակ հաղթանակ տարավ արաբների նկատմամբ՝ ազատելով գերիներին[23]:*

*Այս դժվարին պայմաններում, երբ շարունակվում էր արաբա-բյուզանդական հակամարտությունը, սպասվում էր արաբների հերթական ներխուժումը Հայաստան, պետք էր երկրում առկա բոլոր ուժերը միավորել, բայց հայ նախարարների միջև նորից միասնություն չկար արտաքին վտանգին դիմագրավելու գործում: Ինչպես կարծում է Վ. Իսկանյանը. «Արտաքին նվաճողների միջև կողմնորոշման խնդրի շուրջ հայ աշխարհիկ և եկեղեցական ֆեոդալական շրջաններում սկսում են առաջանալ ու որոշակիորեն կազմավորվել երկու տարբեր և իրար հակադիր ուղղություններ կամ խմբավորումներ»[24]: Թեոդորոս Ռշտունին և իր կողմնակից փոքրաթիվ նախարարները փորձում էին արտաքին քաղաքականության հարցերում կողմնորոշվել դեպի արաբական խալիֆայություն: Մյուս խմբավորումը՝ Ներսես Գ կաթողիկոսի, ինչպես նաև այդ ժամանակ Հայաստանում հզորությամբ իրենց հավասարը չունեցող Մամիկոնյանների գլխավորությամբ, որդեգրել էր ավանդական՝ բյուզանդական կողմնորոշում, քանի որ քրիստոնյա Բյուզանդիան դարավոր հարևան էր, իսկ իսլամի հետևորդները նոր-նոր էին երևացել տարածաշրջանում, որի իշխողները չգիտեին նրանց մտադրությունների մասին: Կարծում ենք՝ նախօրոք արաբներից որոշակի երաշխիքներ ստանալով, օգտվելով Հայոց իշխան լինելու իր իրավունքներից, հայ նախարարների անունից և, ինչպես նկատել է Է. Դանիելյանը, «Անկախ այն հանգամանքից, թե այդ նախարարների որ մասն էր համաձայն նրա քաղաքական գծին»[25], Ռշտունյաց տերը բանակցություններ է սկսում Ասորիքի կառավարիչ Մուավիայի հետ,*

---

[21] **Հովհաննիսյան Ն.,** *Արաբական երկրների պատմություն, արաբները VII դարից մինչև 1516 թ., հ. 1, Ե., 2003, էջ 81: Դվինի 649 թ. եկեղեցական ժողովի մասին մանրամասն տե՛ս* **Սեբեոս,** *էջ 148-162:*

[22] *Տե՛ս* **Ղևոնդ,** *էջ 10-11:*

[23] *Նույն տեղում, էջ 11-12:*

[24] **Իսկանյան Վ.,** *Հայ-բյուզանդական հարաբերությունները VII դարում՝ արաբական առաջին արշավանքների ժամանակ (ՊԲՀ, 1971, - 4, էջ 76):*

[25] **Դանիելյան Է.,** *նշվ. աշխ., էջ 212:*

և 652 թ. նրանց միջև պայմանագիր է կնքվում[26]: Ըստ այդմ, Հայաստանը առերևույթ և ժամանակավորապես մի շարք արտոնություններ էր ստանում. ուսումնասիրողները դա գնահատել են որպես հայկական կողմի ձեռքբերում[27]: Կարծում ենք՝ որ այս պայմանագիրը ոչ թե Ռշտունու դիվանագիտական հմտությունների արդյունք էր, այլ արաբները լուծում էին հեռահար նպատակներ, այն է՝ նրանք դեռևս պետք է հաստատվեին տարածաշրջանում, լուծեին իրենց խնդիրները կայսրության հետ, որի նկատմամբ մինչև վերջ էլ չկարողացան հաղթանակ տանել, և նրանք պետք է սիրաշահելու քաղաքանություն վարեին եթե ոչ հայ ավագանու գերակշիռ, ապա գոնե մի մասի հանդեպ՝ փորձելով նրանց սին խոստումներով կտրել բյուզանդական ազդեցությունից: Ինչպես այդ առիթով նկատել է Է. Դանիելյանը, «Բյուզանդիայի դեմ պատերազմելիս (Արաբական խալիֆայությունը ձգտում էր - Վ.Ա.) Հայաստանը պահել իր քաղաքական ոլորտում և անհրաժեշտության դեպքում հայոց այրուձին օգտագործել խալիֆայության թշնամիների դեմ, իսկ վերջնական նպատակն էր նվաճել Հայաստանը»[28]: Ասվածի ապացույցն են դառնալու արաբների հետագա քայլերը Հայաստանում:

Բյուզանդական կայսրությունը, ինչպես սպասելի էր, չէր հաշտվելու հայ-արաբական պայմանագրի հետ և ջանալու էր Հայաստանը պահել իր քաղաքականության ոլորտում: Այդ նպատակով 652 թ. աշնանը Կոստանդ Բ կայսրը 100 հազարանոց բանակով շարժվեց դեպի Հայաստան[29]: Դերջանում կայսրին ներկայացան Մուավիայի պատվիրակները՝ զգուշացնելով, որ եթե շարունակեն արշավանքը, ապա դա առաջ կբերի արաբա-բյուզանդական հակամարտություն, սակայն կայսրը, կարևորություն չտալով արաբական սպառնալիքներին, շարունակեց արշավել և հասավ բյու-զանդական Հայաստանի կենտրոն՝ Կարին: Այնտեղ կայսրին ներկայացան ոչ միայն Ներսես Գ կաթողիկոսը և հայ նախարարների բյուզանդամետ կողմնորոշում ունեցող խմբավորումը, այլև Թեոդորոս Ռշտունու կողմնակիցներից շատերը: Այս առումով Ս. Մելիք-Բախշյանը նշում է. «Հայ ազնվականների մի քանի տատանվող և թուլամորթ տարրեր բացահայտ լքեցին Թեոդորոս Ռշտունուն, իրենց զորքերով անցան Բյուզանդիայի

---

[26] **Սեբեոս,** *էջ 164:*

[27] **Լեո,** *Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1967, էջ 311-312,* **Մելիք-Բաշխյան Ս.,** *Հայաստանը VII-IX դդ., էջ 71,* **Տեր-Ղևոնդյան Ա.,** *Հայաստանը VI -VIII դարերում, էջ 67,* **նույնի՝** *Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Ե., 1984, էջ 311: Կ. Յուզբաշյանը նշում է. «652 թ. Հայաստանի համար ձեռնտու պայմանագիր կնքեց (Թեոդորոս Ռշտունին - Վ. Ա.) արաբների հետ... ճանաչելով խալիֆայու-թյան գերագույն իշխանությունը» (***Юзбашян К.** *Армянские государства эпохи Багратидов и Византия в IX-XI вв., М., 1988, с. 30-31):*

[28] **Դանիելյան Է.**, *նշվ. աշխ., էջ 210:*

[29] **Սեբեոս,** *էջ 165,* **Stratos A.** *Byzantium in the Serenth Century, I. Amsterdam, 1972, p. 19-35,* **Վարդանյան Ա.,** *Աղվանքը VII դարի կեսերին (ՊԲՀ, 2015, - 1, էջ 247):*

*կողմը և կաթողիկոս Ներսեսի հետ միասին ընդառաջ գնալով կայսրին, ներկայացան նրան Կարինում»[30]: Իսկ Հ. Դավթյանը, իր աշխատանքում, կարծում ենք, փորձում է նսեմացնել Մամիկոնյանների դերը միջնադարյան Հայաստանի քաղաքական կյանքում, կայսրի հետ նախարարների հանդիպումը համեմատում է 452 թ. Տիզբոնում կազմակերպված՝ հայ նախարարների և հոգևորականության դատավարության հետ. «Հայ իշխաններն ու հոգևորականները, իսկ նրանց մեջ որպես գլխավոր՝ Մամիկոնյաններն ու կաթողիկոսները, երկուսն էլ օտար տիրակալի առջև մատնում էին (մարզպան Վասակ Սյունուն և Թեոդորոս Ռշտունուն-Վ. Ա.)՝ մեղադրելով պետական դավաճանության մեջ»[31]: Անդրադառնալով Ս. Մելիք-Բախշյանի տեսակետին՝ նշենք որ նրանք մի քանիսը չէին, այլ նախարարների գերակշիռ մասը, և այդ պահին կաթողիկոսը և նրան միացած հայ իշխանները դիվանագիտական ճիշտ քայլ կատարեցին. այն է՝ վտանգը վերացնելու համար հպատակություն հայտնեցին կայսրությանը, քանի որ արաբական սպառնալիքները հաշվի չառած Կոստանդ Բ-ն լի էր ամբողջ Հայաստանը ռազմակալելու վճռականությամբ և ավերի ու ավարի մատնելու երկիրը: Ավելորդ է նշել, որ Կարինում կայացած հանդիպումը ոչ մի նմանություն չուներ 452 թ. Տիզբոնի դատավարության հետ: Կաթողիկոսը և նախարարները փորձում էին կարգավորել հարաբերությունները կայսրության հետ, Կարինում չկային ոչ դատողներ, ոչ էլ առավել ևս՝դատվողներ:*

*Ներսես կաթողիկոսը և կուսակից նախարարները կայսրին համոզեցին չասպատակել, աղետների չմատնել Հայաստանը՝ հայ-արաբական դաշինքի պատճառով[32]: Կայսրը, անսալով կաթողիկոսի և Մուշեղ Մամիկոնյանի խնդրանքին, հրաժարվեց Ռշտունուն պատժելու մտադրությունից, որը մինչ այդ ձերբակալել էր 40 զինվորի և քաշվել իր նստավայրը՝Աղթամար կղզին: Կոստանդին Բ-ն արձակեց իր բանակի մեծ մասը և 20 հազարով շարունակեց արշավանքը, հասավ Դվին՝հաստատվելով կաթողիկոսական պալատում[33]՝ առանց որևէ ավերածություն կատարելու երկրում: Նա Դվինում սպարապետ կարգեց Մուշեղ Մամիկոնյանին և նրան 3 հազարանոց զորքով ուղարկեց Վասպուրական: Նշենք, որ Բյուզանդական զորամիավորումները հարձակվեցին նաև Վիրքի և Աղվանքի վրա, սակայն լուրջ հաջողություններ չունեցան[34]: Դվինի Ս. Գրիգոր մայր տաճարում պատարագ մատուցվեց հունական ծեսով՝ որը դարձյալ*

---

[30] **Մելիք-Բախշյան Ս.,** *Հայաստանը VII-IX դարերում, էջ 72:*

[31] **Դավթյան Հ.,** *Հայոց պատմական հնարավորությունները VI-VII դարերում, Ե., 2010, էջ 184:*

[32] **Վարդանյան Վ.,** *Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչմերուկներում, Վաղարշապատ, 2005, էջ 323:*

[33] **Սեբեոս,** *էջ 166:*

[34] *Նույն տեղում:*

*հայերին քաղկեդոնականություն պարտադրելու մի փորձ էր: Կարծում ենք՝ կաթողիկոսի և բարձր հոգևորականության համար դա հարկադրական տուրք էր Հայաստանի սիրտը թափանցած հզոր երկրի տիրակալին[35]: Իսկ մյուս կողմից էլ, դեռ պարզ չէր արաբների վերաբերմունքը հայերի նկատմամբ: Վ. Վարդանյանը. իրավացիորեն նկատել է. «Ներսես կաթողիկոսը համոզված չէր, որ արաբների հետ Թոդորոս Ռշտունու կնքած պայմանգիրը կարող էր տևական լինել»[36]: Ուստի հոգևոր վերնախավը ժամանակ էր շահում և, խուսափելով բացահայտ առճակատումից, առանց ցնցումների, հեռացնում էր կայսերական բանակը Հայաստանից: Ներսես Գ կաթողիկոսը՝ որպես պետականորեն մտածող այր, «հավանաբար իշխանական տունէ ալ սերած էր»[37], և երկրի անվտանգությունն ու ապագան տեսնում էր քրիստոնյա Բյուզանդիայի հետ ամուր դաշնակցության մեջ: Այդ առումով տեղին է նշել, որ, երբ կայսրը հեռացավ Հայաստանից, կաթողիկոսն անմիջապես տե-ղափոխվեց Տայք՝ հաստատվելով իր ծննդավայր Իշխան գյուղում՝ չցանկանալով դառնալ իր կուսակիցների և Թեոդորոս Ռշտունու գլխավորած խմբավորման միջև հնարավոր եղբայրասպան պատերազմի պատճառ, քանի որ արաբամետ նախարարները «անհնարին ցասմամբ փքացեալ էին ի վերայ նորա»[38]: Եվ դա կարող էր պատճառ դառնալ, որ կայսրը վերստին միջամտեր Հայաստանի ներքին գործերին:*

*Փորձելով վերադարձնել իր իշխանությունը՝ Թ. Ռշտունին օգնության կանչեց արաբներին և ստանալով 7000-ոց մի զորախումբ՝ պայքար սկսեց կայսեր կողմից Հայաստանի կառավարչի պաշտոնում նշանակված Մավրիանոսի դեմ[39]:*

*Հայ-արաբական միացյալ զորախումբը կարողացավ հաղթանակ տանել բյուզանդացիների նկատմամբ, հասավ մինչև Տայք, ապա շարունակելով արշավանքը՝ գրավեց Տրապիզոնը: Իհարկե, անցնելով Հայաստանի շրջաններով, արաբները պետք է կողոպտեին հայ բնակչությանը, որ և արեցին՝ ավերի ու ավարի մատնելով երկիրը, սակայն այդ ամենը քիչ էր հետաքրքրում Թ. Ռշտունուն: Նրա համար գլխավորը երկրում իր իշխանության վերականգնումն էր և բյուզանդացիների նկատմամբ հաղթանակ տանելը: Այս առումով Է. Դանիելյանը գրում է. «Թեոդորոս Ռշտունին անկախ իր պայքարի հակաբյուզանդական ողղվածությունից, ծայրահեղ վտանգավոր հետևանքներով լի քայլ էր կատարել՝ օգնություն կանչելով արաբական զորքին: Խալիֆայությունը, թվում էր, թե*

---

[35] **Վարդանյան Վ.,** *Հայոց եկեղեցին..., էջ 324:*

[36] *Նույն տեղում, էջ 327:*

[37] **Օրմանյան Մ.,** *Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, էջ 823:*

[38] **Սեբեոս,** *էջ 168:*

[39] *Նույն տեղում, էջ 168-169:*

*գործում է համաձայն հայ-արաբական պայմանագրի, սակայն իրականում իրեն ճանապարհ էր հարթում Հայաստանը և հարևան երկրները նվաճելու համար»[40]: Իսկ Լեոն, թեպետ դրվատում է Թ. Ռշտունու կատարած քայլերը, այնուամենայնիվ, նշում է. «Թեոդորոսի քաղաքականության հաղթանակը երկարատև չէր»[41]: Նման քայլերով Ռշտունյաց իշխանը Հայաստանը դարձնում էր արաբա-բյուզանդական պատերազմների թատերաբեմ, և երկիրը ինքնաբերաբար մատնվում էր ավերի ու թալանի:*

*Վերադառնալով հարուստ ավարով՝ Թ. Ռշտունին մեկնեց Դամասկոս և այստեղ նրա մատուցած ծառայությունների համար Մուավիան «Իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և ցՊահակն Ճորայ, և արձակեաց զնա պատուով: Եւ նորա պայման էր եդեալ նմա՝ ածել զերկիրն զայն ի ծառայութիւն»[42]: Սա այն տարածքն էր, որից հետագայում առաջացավ Արմինիա նահանգը՝ Արաբական խալիֆայության մեջ[43]:*

*Մինչ շարունակվում էին արաբա-բյուզանդական հակամարտությունը՝ փոփոխակի հաջողություններով, և արաբների ասպատակությունները դեպի Այսրկովկաս, Հայաստանում արաբական կողմնորոշում ունեցող նախարարների համար պարզ էր դառնում 652 թ. հայ-արաբական դաշնագրի անհեռանկար լինելը: Այդ կողմնորոշման ջատագովներից Համազասպ Մամիկոնյանը[44] և բյուզանդամետ խմբավորման ղեկավար Մուշեղ Մամիկոնյանը գումարում են նախարարական ժողով. «Իշխանքն Հայոց որ ի Յունաց և որ ի Տաճ-կաց կողմանէ, Համազասպ և Մուշեղ, և այլն ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան...»[45]: Նրանք միահամուռ կերպով որոշում են երկրի պաշտպանությունը հանձնել նախարարներին՝ ըստ գավառների ու հեծյալների թվի[46]: Մեր կարծիքով, այս օրհասական պահին, երբ սպասվում էր արաբների հերթական արշավանքը, Մամիկոնյան իշխանները մի կողմ դրեցին տարաձայնությունները և փորձեցին համախմբել նախարարներին: Սակայն «Թեոդորոս Ռշտունին, որ հաճախ էր իր նախարարների մեծ մասի դիմադրությանը հանդիպել, այդ ժամանակ փոքր հեղինակություն էր*

---

[40] **Դանիելյան Է. Լ.,** *նշվ. աշխ., էջ 216:*

[41] **Լեո**, *Երկերի ժողովածու, էջ 316:*

[42] **Սեբեոս,** *էջ 169:*

[43] **Տեր-Ղևոնդյան Ա.,** *Հայաստանը VI-VIII դարերում, էջ 71:*

[44] *Համազասպ Մամիկոնյանը ունեցել է նաև կյուրապաղատի տիտղոս (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Ե., 1988, էջ 16):*

[45] **Սեբեոս,** *էջ 171:*

[46] *Նույն տեղում, էջ 172: Իհարկե, պատերազմի դեպքում նախարարական զորագնդերը հավաքվելու էին սպարապետի հրամանատարության ներքո:*

*վայելում, հիվանդ էր, մեկուսացված Աղթամար կղզում»[47], փորձեց արաբների օգնությամբ վերստին վերականգնել իր իշխանությունը և սասանված հեղինակությունը: Հայոց իշխանը դիմեց խալիֆայությանը՝ զորք խնդրելով: Օգտվելով 652 թ. հայ-արաբական պայմանագրի ընձեռած հնարավորությունից և Հայոց իշխանի խնդրանքից՝ 654 թ.[48] արաբական զորամիավորումը Հաբիբ իբն Մասլամայի գլխավորությամբ ներխուժեց Հայաստան[49]: Արաբները, անցնելով Բարձր Հայքով, պաշարում և գրավում են Կարին քաղաքը[50]: Նրանք իրար հետևից գրավում են Հայաստանի գավառներն ու նշանավոր քաղաքները, կարճ դիմադրությունից հետո նաև Դվինը: Այս արշավանքով արաբները նվաճեցին ամբողջ Հայաստանը: Արաբ զորավարը նշանավոր նախարարական տներից պատանդներ վերցրեց. նրանց մեջ էին նաև VII դ. երկրորդ կեսին Հայաստանի քաղաքական կյանքում մեծ դեր խաղացած Գրիգոր Մամիկոնյանը և Սմբատ Բագրատունին[51]: Տեսնելով այդ ամենը՝ Թ. Ռշտունին ինքնակամ միացավ արաբներին՝ Դամասկոս գնալու, հայ-արաբական անհեռանկար հարաբերությունները շտկելու հույսով: Սակայն 656 թ. Ասորիքում Հայոց իշխանը կնքեց իր մահկանացուն[52]:*

*Այսպիսով՝ 652 թ. հայ-արաբական պայմանագիրը առանձնապես ոչինչ չտվեց Հայաստանին, քանի որ այն ոչ թե հայկական դիվանագիտության հաղթանակն էր, այլ արաբները դրանով դեռևս պետք է հաստատվեին Հայաստանում՝ ամուր հենարան ունենալու Բյուզանդիայի դեմ առաջիկա պայքարում, և այդ պայմանագրով նրանք միայն ժամանակ էին շահում: Վերջնականապես հաստատվելով տարածաշրջանում՝ նրանք դեն նետեցին ամեն տեսակ ձևականություն և գրավեցին Հայաստանը՝ աննախադեպ հաշվեհարդար տեսնելով հայ իշխանների հետ: VII դ. կեսերին հայ իշխող վերնախավը չկարողացավ կողմնորոշվել ստեղծված իրավիճակում, միասնություն հանդես բերել և միահամուռ ուժերով պայքարել օտար նվաճողների դեմ:*

---

[47] **Տեր-Ղևոնդյան Ա.,** *Հայաստանը VII-VIII դարերում, էջ 74:*

[48] **Թեոփանես Խոստովանող,** *էջ 56:*

[49] *Հաբիբ իբն Մասլամայի՝ Հայաստան արշավանքի թվականի և երթուղու մասին մանրամասն տե՛ս* **Եղիազարյան Ա.,** *Հաբիբ իբն Մասլամայի և Սալման իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և Այսրկովկասյան երկրներ (Լրաբեր հասարակական գիտությունների, 2008, N 2, էջ 68-77):*

[50] **Баладзори,** *Книга завоевания стран, текст и перевод с арабского проф. Жузе П. К., Баку, 1927, с. 8-9.*

[51] **Ղևոնդ,** *էջ 14:*

[52] **Մելիք-Բախշյան Ս.,** *Հայաստանը VII-IX դարերում, էջ 83,* **Իսկանյան Վ.,** *Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Ե., 1991, էջ 504: Թեոդորոս Ռշտունու մահվան թվականի վերաբերյալ ուսումնասիրողները միակարծիք չեն (տե՛ս* **Իսկանյան Վ.,** *նշվ. աշխ., էջ 504, ծան. 2):*

## ПОЗИЦИЯ АРМЯНСКИХ НАХАРАРОВ В ОТНОШЕНИИ ПЕРВЫХ АРАБСКИХ ПОХОДОВ

ВАРДАНЯН А. М.

Резюме

За короткий период преодолев сопротивление Персии и Византии, арабы вторглись в Армению. Воспользовавшись наличием противоречий между нахарарами и разрозненностью военных сил, они неоднократно совершали набеги на Армению. Часть нахараров надеялась на поддержку Византии, другая же часть связывала надежды с халифатом. Последний, воспользовавшись этим обстоятельством, а также армяно-арабским договором 652 г., военизировал Армению, которая после этого на протяжении многих веков находилась под его гнетом.

## THE POSITION OF ARMENIAN MINISTERS DURING THE FIRST ARAB INVASIONS

A. VARDANYAN

Abstract

Within a short period overcoming the resistance of Byzantium and Persia, Arabs invaded Armenia. They were taking advantage of the contradictions between Armenian ministers and distraction of the country's military forces, several times raided Armenia. Some of the ministers tried to rely on Byzantium, and others Arab Caliphate. The latter took advantage of that fact and the ability of the 652 Armenian-Arab peace agreement, threw out any formality, blockade the Armenian country and several centuries plundered the one.